ՈԳԵԿՈՉՄԱՆ ԵՐԵԿՈ

«ԳԱՅԱՆԵՆ ՄԵՐ ԿՈՂՔԻՆ Է»

Երեկոն հավաքել էր Գայանե Խաչատրյան (1942-2009թթ.) գեղանկարչին անձամբ ճանաչողներին, մտերիմներին եւ, իհարկե, նախեւառաջ նրա արվեստի երկրպագուներին: Այո, Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակութային կենտրոնի պատկերասրահը նոյեմբերի 28-ին նվիրվել էր նկարչուհու ոգեկոչմանը՝ առանց որեւէ ավանդականության թելադրանքի, առանց նկարչուհու անձի հետ կապված որեւէ հոբելյանական տարեթվի արձագանքելու միտումի:

Թբիլիսցի երեք սերնդի ներկայացուցիչներ պարզապես միատեղվել էին այստեղ, որպեսզի մեծարեին Վրաստանի գեղանկարչական դպրոցի 20-րդ դարի արժանի հետնորդին, հաղորդակցվեին իրենց համաքաղաքացու խռովահույզ, անսովոր ու բանաստեղծական էությանը:

Պատկերասրահում թեւածում էր՝ մտովի այլ ծիրերում սավառնող, իր կտավներում այդ տարածքներից բարության սերմեր սփռող գեղանկարչի ոգին: Գայանե Խաչատրյանի մասին «պատմում» էին թբիլիսցի հայտնի լուսանկարիչներ Յուրի Մեչիտովի, Ալեքսանդր Սահակովի, Յուրի Ակուլյանի, այլոց նրան նվիրված լուսանկարների հարուստ եւ բազմաբովանդակ հավաքածուներն ու թբիլիսցիներ Էդուարդ Մեսրոպյանի, Եսայի Աբովյանի, Միքայել Ավագյանի, Գոհար Մազմանյանի, Սուսաննա Խաչատրյանի, այլոց անձնական հավաքածուներում պահվող Գայանե Խաչատրյանի կտավներից 14 մատիտանկար եւ 3 յուղաներկ գործ:

Արվեստագետ-կոլեգաները, ծանոթ-մտերիմները, Գայանե Խաչատրյանի հետ առնչված մարդիկ՝ Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը, ով նաեւ վարեց երեկոն, գեղանկարիչներ Լեւոն Օսիպովը, Էդուարդ Մեսրոպյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, բանաստեղծներ, թարգմանիչներ Գիվի Շահնազարը, Անահիտ Բոստանջյանը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի ռեժիսոր, դերասան Ռոմա Մաթիաշվիլին, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, լուսանկարիչ Յուրի Մեչիտովը, երաժիշտ Եսայի Աբովյանը, Վիրահայոց թեմի մամլո եւ լրատվական բաժնի տնօրեն Սուսաննա Խաչատրյանը, այլոք սիրով հիշեցին վաղաժամ վախճանված նկարչուհու մարդկային գեղեցիկ հատկանիշները, նրա՝ որպես արվեստագետի խոր ու առեղծվածային կերպարը: Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն իր արժեւորման խոսքում Գայանե Խաչատրյանին դիտեց՝ որպես հայ կերպարվեստի թիֆլիսյան դպրոցի ներկայանալի դեմքերից մեկի:



Երեկոն ավարտվեց Գայանե Խաչատրյանի մասին պատմող վավերագրական կինոժապավեններից հատվածների ցուցադրումով:

Միջոցառումը կազմակերպվել էր Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակութային կենտրոնի, Վրաստանի հայ նկարիչների միության կողմից՝ «ՇԷՆ» ասոցիացիայի աջակցությամբ:

ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԿԻՆՈ

ԹԲԻԼԻՍԻԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆԻՆ ՑՈՒՑԱԴՐՎԵՑ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՖԻԼՄԸ

Աշխարհահռչակ երեւանցի կինովավերագիր, մի քանի միջազգային փառատոների դափնեկիր Հարություն Խաչատրյանի «Անվերջ փախուստ, հավերժ վերադարձ» ֆիլմը մասնակցում է Թբիլիսիի 16-րդ միջազգային փառատոնին: Դեկտեմբերի 3-ին այն ցուցադրվեց մայրաքաղաքի գլխավոր կինոթատրոնում, որը կրում է Շոթա Ռուսթավելու անունը:

Դրամատիզմով, հուզականությամբ, խորհրդանիշերով լի այս ֆիլմը պատմում է, թե ինչու են որոշ հայեր փախչում Հայաստանից, իրենք իրենցից եւ իրենց արմատներից:

Հանդիսատեսը ծափահարություններով ընդունեց ֆիլմի վերջին կադրերը եւ շնորհակալություն հայտնեց հեղինակին: Ֆիլմի ցուցադրումից հետո, ծնունդով ախալքալաքցի Հարություն Խաչատրյանը պատասխանեց հանդիսատեսի եւ լրագրողների հարցերին:

ՎՆԱՍՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ԻՐԻՑՅԱՆ. «ՍՈՒՐ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԿՍՏԱՆԱՔ ԱՆՎՃԱՐ ԲՈՒԺՈՒՄ»

27-ամյա Արմեն Իրիցյանի ծննդավայրը Վրաստանի Նինոծմինդա քաղաքն է: Ուսումնառության վայրերը՝ Նինոծմինդայի թիվ 2 ռուսական դպրոցը, Երեւանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի վնասվածքաբանության եւ օրթոպեդիայի ֆակուլտետի հայկական բաժինը: Ներկայումս Արմենը շարունակում է ետբուհական կրթությունը՝ Երեւանի Վնասվածքաբանության եւ օրթոպեդիայի գիտական կենտրոնի օրդինատորիայում: Անցնելով օրդինատորական եռամյա կրթության շուրջ երկու տարին՝ Կենտրոնի հատուկ ծրագրով երիտասարդ վնասվածքաբան-օրթոպեդը գործուղվել է Թբիլիսի եւ աշխատում է Վնասվածքաբանության կենտրոնում՝ որպես կրտսեր բժիշկ:

- Արմեն, մի փոքր պարզաբանեք, թե ի՞նչ է նշանակում գիտական կենտրոնի հատուկ ծրագիր:

- Երեւանի Վնասվածքաբանության եւ օրթոպեդիայի գիտական կենտրոնի հատուկ ծրագիրը, որով ինձ ուղարկել են Վրաստան, ոչ Հայաստանի քաղաքացի, օրդինատոր ուսանողին թույլ է տալիս ուսուցման ընթացքում գտնվել իր ծննդավայրում, աշխատել այդ երկրի առողջապահական համակարգում՝ նրան ծանոթանալու եւ, ցանկության դեպքում, ուսումնառությունից հետո վերադառնալու եւ այնտեղ աշխատելու հեռանկարով:

- Ուրեմն, Ձեր բժշկական կարիերան կշարունակվի՞ Վրաստանում:

- Միանշանակ, ես մտադիր եմ վերադառնալ ծննդավայրս՝ Նինոծմինդա: Հուսով եմ, համապատասխան մարմինների աջակցությամբ կկարողանամ իրագործել իմ մասնագիտական գիտելիքները, ստեղծել հիվանդանոցային առավել բարեկարգ պայմաններ, ապահովել ժամանակակից բարձրորակ սարքավորումներով ու, այս ամենի արդյունքում, հենց Նինոծմինդայում իրագործել օրթոպեդիկ ամենաբարդ վիրահատությունները...

- Արմեն, հետաքրքիր մասնագիտություն ունեք, ի՞նչ խորհուրդ կտաք մեր ընթերցողներին, եթե նրանց, կոտրվածքներ ունենալու դեպքում մինչ բժշկին դիմելը, բուժօգնություն պահանջվի:

- Յուրաքանչյուր թարմ վնասվածքի դեպքում, անհրաժեշտ է վնասված հատվածի անշարժացում (կոտրված հատվածին դնել քանոն, բարակ փայտ կամ այլ հարմար առարկա եւ փաթաթել): Եթե մաշկածածկույթը վնասված չէ, դնել սառը թրջոցներ: Չկատարել մերսում, սպիրտային կամ տաք թրջոցներ չդնել:

- Մի քանի խոսք՝ բժշկական նորույթների մասին. կոնկրետ վնասվածքաբանության մեջ կա՞ն այդպիսիք:

- Բժշկական ոլորտի, համաշխարհային մասշտաբի, յուրաքանչյուր գիտական նորույթ, ամենակարճ ժամանակամիջոցում պրակտիկապես յուրացվում եւ կիրառվում է:

Ներկայումս Թբիլիսիում կատարվում են այնպիսի բարդ վիրահատություններ, ինչպիսիք են ծնկան, կոնքազդրային հոդերի էնդոպրոթեզավորումները կամ կոտրվածքների օստրիոսինթեզները (հատուկ նյութով կոտրված հատվածի վերականգնում), որոնք իրենց որակյալ արդյունքներով չեն զիջում Գերմանիայում, ԱՄՆ-ում կատարվող բուժումներին:

- Իսկ ո՞ր դեպքում եւ ո՞ւմ է տրվում հիվանդանոցային անվճար բուժում:

- Մեզ մոտ՝ Թբիլիսիի Վնասվածքաբանության հոսպիտալում, սուր, ծանր վնասվածքների դեպքում, անկախ տարիքից ու աշխատանքից, անվճար բուժումով են ապահովվում Վրաստանի բոլոր քաղաքացիները:

- Դուք՝ ռուսական դպրոց եւ հայկական բուհ ավարտած Իրիցյան բժիշկը, ի՞նչ լեզվով եք շփվում վրացի կոլեգաների եւ հիվանդների հետ:

- Երբ եկա այստեղ աշխատելու, վրացերեն միայն գրել-կարդալ գիտեի, սակայն, շփման պրակտիկայի եւ ընթերցանության շնորհիվ, կարողացա շատ կարճ ժամանակամիջոցում հասնել որոշակի արդյունքի եւ ձեռք բերել այն, ինչ ցավոք բաց էր թողնված դպրոցական հասակում: Ներկայումս հիմնականում վրացերենով եմ շփվում կոլեգաներիս ու հիվանդների հետ: Բնականաբար, աշխատանքում պահանջվող փաստաթղթային գրառումները կատարում եմ վրացերեն: Այդով հանդերձ, շարունակում եմ ինքս ինձ վրա աշխատել վրացերենի կատարելագործման ուղղությամբ: Ի տարբերություն մեր սերնդի, այսօր Սամցխե-Ջավախեթիի ներկայիս մատաղ սերունդը արդեն փոքրուց սովորում է վրացերենը՝ գիտակցելով պետական լեզվի իմացության անհրաժեշտությունը:

- Իսկ ինչպե՞ս եք զգում Ձեզ նոր կոլեկտիվում:

- Առաջին պահերին դժվար էր, բայց, շնորհիվ կոլեգաներիս բարեհաճ եւ ընդառաջող վերաբերունքի, ինքնուրույն կատարում եմ իմ բոլոր պարտականությունները, նաեւ հերթապահում եմ: Մի խոսքով, աստիճաբար մերվեցի կոլեկտիվին, ուր այսօր ունեմ լավ ընկեր-բարեկամներ: Շնորհակալ եմ վնասվածքաբան-օրթոպեդ Ռուբեն Ստեփանյանին, իմ անմիջական ղեկավար, բաժնի վարիչ Դավիթ Ցոտաձեին, բժիշկ, պրոֆեսոր Գելա Չադունելուն, ովքեր իրենց փորձը սիրով փոխանցում են երիտասարդ բժիշկներիս:

Զրուցեց
ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑՆՈՒՄ Է ՄԵԿԸ, ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐԻՆ

Խորագիրը վարում է աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության հասարակության հետ կապի դեպարտամենտի պետ, Վրաստանի հեռուստահաղորդումների խորհրդական ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻՆ:

Հարց. *Ցանկանում եմ իմանալ, ի՞նչ է նախատեսվում «Լրիվությամբ պետական ապահովման ներքո» գործող օրենքում նշված արտահայտությունը:*

Ի.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ախալցիխե

Պատասխան. Նման դեպքերում, նկատի է առնվում սննդամթերքով, ապաստարանով եւ հագուստով այն անձանց ապահովումը, ովքեր գտնվում են պետության ֆինանսավորման ոլորտում:

Հարց. *Խնդրում եմ պարզաբանել, մեր կառավարությունը ծրագրո՞ւմ է, արդյոք, կենսաթոշակների ավելացում՝ ելնելով լարիի արժեզրկումից, եւ եթե այո, ապա ի՞նչ կարգով է իրականացվելու նշանակված կենսաթոշակների վերահաշվարկումը: Ավելի կոնկրետ, դրա համար անհրաժե՞շտ է, արդյոք, դիմում ներկայացնել սոցիալական սպասարկման գործակալությանը, եւ հավաքել աշխատանքային ստաժի տեւողության մասին փաստաթղթերը: Նշեմ, որ վերջին փաստաթուղթը ներկայացրել եմ տասը տարի առաջ, երբ կենսաթոշակ էին նշանակում:*

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Թբիլիսի

Պատասխան. «Պետական կենսաթոշակի մասին» 2006 թվականի հունվարի 1-ից գործող օրենքի համաձայն, սահմանված թոշակի չափի առումով փոփոխությունների կատարման դեպքում, վերահաշվարկումը ավտոմատորեն կիրականացվի Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության վերահսկողության ներքո գործող հանրային իրավունքի իրավաբանական անձ, սոցիալական սպասարկման գործակալության շրջանային ծառայությունում՝ ըստ կենսաթոշակը ստացող անձի գրանցման վայրի: Միաժամանակ նշենք, որ լարիի արժեզրկման կապակցությամբ, այս տարի կենսաթոշակների չափի ավելացման մասին տեղեկատվություն չունենք:

Հարց. *Խնդրում եմ պարզաբանել, գործող օրենսդրության համաձայն, ի՞նչն է համարվում պետական թոշակի նշանակման հիմնավորումը: Ցանկանում եմ պարզել՝ մինչեւ կենսաթոշակային տարիքը մնացած երկու ամիսը պահանջվո՞ւմ է, արդյոք, քսանամյա աշխատանքային ստաժի առկայությունը, որպեսզի ստանամ նվազագույն կենսաթոշակ:*

Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բոլնիսի

Պատասխան. Տարիքային կենսաթոշակի նշանակման գլխավոր հիմնավորումը կենսաթոշակային տարիքի հասնելն է: Եթե դուք, կենսաթոշակային տարիքին հասնելուց հետո, պետական բյուջեից ֆինանսավորվող հաստատության աշխատակից չեք, անկախ աշխատանքային ստաժի ժամկետից, բոլոր դեպքերում ձեզ կնշանակվի 160 լարիի չափով կենսաթոշակ:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

ÌÆÖ²Î²¶ðàôÂÚàôÜ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՉԱՐԻՔ

Այն, որ այսօր ահաբեկչությունը համամարդկային չարիքի բայահայտ դրսեւորում է, ակնհայտ փաստ է: Գրեթե ամեն օր հեռուստատեսությամբ լսում ու տեսնում ենք այս կամ այն երկրում պայթեցված մեքենաների, ինքնասպան ահաբեկիչների եւ, իհարկե, անմեղ մարդկային զոհերի մասին: Հետաքրքիր է, որեւէ վիճակագրություն անցկացվե՞լ է, արդյոք, ահաբեկչության զոհերի հաշվարկի հարցով:

Խ.Վարդանյան

Թբիլիսի

Նման վիճակագրություն կա: Օրինակ, զինված հակամարտությունների տարածման ֆոնին 2014 թվականին աշխարհում ահաբեկչության զոհերի թիվը, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել է 80 տոկոսով, ինչն այդ ցուցանիշի ամենամեծ աճն է դարձել վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում: Այս տվյալները տեղ են գտել «Ահաբեկչության 2015 թվականի գլոբալ վարկանիշ»-ում, որը նոյեմբերի 17-ին Լոնդոնում հրապարակել է Տնտեսության եւ խաղաղության ինստիտուտը:

Ինչպես ասված է հետազոտության մեջ, որը վերլուծում է 162 երկրների իրադրությունը, որոնցում բնակվում է մոլորակի բնակչության 99,6 տոկոսը, ընդամենն անցյալ տարի ահաբեկիչների զոհ է դարձել 32 հազար 658 մարդ: Դա ինն անգամ ավելի է, քան XXI դարի սկզբին, նշում են զեկույցի հեղինակները՝ հիշեցնելով, որ 2000 թվականին աշխարհում ահաբեկչությունից զոհվել է 3 հազար 329 մարդ:

Ինչպես ընդգծվում է զեկույցում, ահաբեկչական ակտիվությունն առավել մեծ է հինգ պետություններում՝ Իրաքում, Նիգերիայում, Աֆղանստանում, Պակիստանում եւ Սիրիայում: Ընդհանուր առմամբ, այս երկրներն են պատասխանատու 2014 թվականին մարդկային զոհերի 78 տոկոսի համար: Հենց նրանք էլ գլխավորում են վարկանիշը: Առաջին տասնյակում տեղ են գտել նաեւ Հնդկաստանը, Եմենը, Սոմալին, Լիբիան եւ Թաիլանդը:

²Úðì²ÎøÜºð

ՀՈՍՈՂ ՁՈՒՐԸ՝ ՕԳՆՈՂ ՄԻՋՈՑ

Բոլորս էլ ենթակա ենք պատահմամբ վնասվելու վտանգին: Մեկ էլ հանկարծ ֆեռքդ այրում ես գոլորշիով, եռացրած ջրով կամ ֆեթով: Ինչպե՞ս կարելի է տնային պայմաններում կատարել առաջին քայլերը, եւ ցավը մեղմել մինչեւ բժշկին դիմելը:

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նինոծմինդա

Ցավը մեղմելու եւ հյուսվածքների այտուցը կանխելու համար պետք է անհապաղ այրված հատվածը հոսող սառը ջրի տակ պահել այնքան ժամանակ, մինչեւ ցավը հանգստանա:

Այնուհետեւ, առաջին աստիճանի այրվածքի դեպքում (երբ մաշկը միայն կարմրել է), վնասված մասին սպիրտ կամ օդեկոլոն քսեք: Վիրակապ կարելի է չդնել: Պարզապես կարող եք դեղատնից այրվածքի համար նախատեսված հատուկ աերոզոլ գնել եւ օրվա մեջ մի քանի անգամ օգտագործել:

Երկրորդ աստիճանի այրվածքի դեպքում (երբ փուչիկներ են գոյանում, իսկ դրանցից մի քանիսն էլ պայթում են) մաշկը սպիրտով մշակել պետք չէ, քանի որ դա ցավոտ է: Փուչիկները ոչ մի դեպքում չի կարելի ծակել, քանի որ դրանք այրված մակերեւույթը պաշտպանում են վարակներից: Այրված մասում ստերիլ վիրակապ դրեք:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԾՐՏԱՇԱՐՈՒՄ՝ ԲՈՒԺՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Սա մաշկի բորբոքային վիճակն է, որն առաջանում է տեւական ցրտի պատճառով: Ոչ այնքան ցածր ջերմաստիճանը նաեւ կարող է ցրտահարություն առաջացնել, եթե այդ վիճակը երկարաձգվում է: Դաստակներին, ոտքերին, ականջախեցիներին, հազվադեպ քթին կամ այտերին հայտնվում են կարմրակապտավուն հետքեր, մաշկն այտուցվում է, շոշափելիս սառն է լինում: Հատկապես տաքացնելիս՝ անհանգստացնում են քորը, մրմուռը: Հիվանդությունը պայմանավորված է մաշկի մազանոթների ֆունկցիոնալ անբավարարությամբ, ցրտի նկատմամբ դրանց չափազանց դյուրազգացությամբ: Հաճախ նպաստավոր պայմաններ են ստեղծվում ոչ լիարժեք սննդառության, նյարդային եւ էնդոկրին խախտումների, վիտամինային անբավարարության պատճառով:

Բուժումը պետք է նշանակվի բժշկի կողմից, քանի որ անհրաժեշտ է գտնել մաշկի անոթների ֆունկցիոնալ անբավարարության հիմնական պատճառը: Անոթների տոնուսն ամրապնդելու համար խորհուրդ է տրվում օգտագործել կոնտրաստային ջերմաստիճաններով տեղային լոգանքներ: Մարմնի ցրտահարման ենթակա հատվածը հաջորդաբար (5-7 րոպե) ընկղմում են մարգանեցի սառը եւ տաք թույլ ջրային լուծույթի մեջ: Դրանից հետո պետք է թեթեւ մերսել եւ շփել կամֆորայի յուղով: Սննդի մեջ անպայման պետք է ընդգրկված լինեն բանջարեղեն, լյարդ (ցանկալի է՝ ձողաձկան), մրգեր, հաղարջ:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐՈ ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՎԱԽԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Ինչպես մարդու մարմինը բաղկացած է բջիջներից, այնպես էլ նրա երազները հյուսված են էմոցիաներից: Էմոցիաներն ունեն երկու հիմնական աղբյուր՝ վախը (ու բոլոր զգացմունքները, որոնք ծնվում են վախից) եւ սերը (ու բոլոր զգացմունքները, որոնք հիմնված են սիրո վրա): Մենք վերապրում ենք երկուսն էլ, բայց առօրյա կանքում մեծամասնության մոտ գերակայում է վախը:

Հասկանալու համար այդ բոլոր զգացմունքները, պետք է բնորոշել սիրո եւ վախի մի քանի առանձնահատկություններ, որոնք անվանում են «Սիրո ճանապարհ» ու «Վախի ճանապարհ»:

Այդ երկու ճանապարհները հաշվարկի մեկնակետեր են, որոնք օգնում են մեզ գիտակցել, թե ինչի վրա է հիմնված մեր կյանքը: Սերը ոչ մի պարտականություն չի ենթադրում: Վախն ամբողջությամբ կազմված է պարտականություններից: Գնալով վախի ճանապարհով՝ մենք այս կամ այն բանն ենք անում, որովհետեւ պարտավոր ենք: Մենք ունենք պարտականություններ, բայց երբ հայտնվում է մի բան, որը մենք պարտավոր ենք անել, նույն պահին սկսում ենք դիմադրել: Եվ որքան մեծ է այդ դիմադրությունը, այնքան շատ ենք տառապում: Վաղ թե ուշ, մեզ մոտ ձգտում է առաջանում՝ խուսափել այդ պարտականություններից: Իսկ սերը, ընդհակառակը, ոչնչի չի դիմադրում: Այդ դեպքում, ինչ էլ մենք անենք, մենք անում ենք պարզապես այն պատճառով, որ սիրում ենք: Ամեն ինչ վեր է ածվում հաճույքի. դա յուրահատուկ մի խաղ է, որը մեզ ուրախություն է բերում:

Սերը ոչինչ չի սպասում: Վախը լի է սպասումներով: Վախենալով՝ մենք անում ենք այս կամ այն բանը, որովհետեւ կարծում ենք, թե պարտավոր ենք դա անել եւ ուրիշներից նույնն ենք սպասում: Ահա թե ինչու, վախը ցավ է պատճառում, իսկ սերը՝ երբեք: Մենք ինչ-որ բան ենք ակնկալում, եւ եթե դա տեղի չի ունենում, մեզ ցավ է պատճառում ու դա անարդար ենք համարում: Մենք մեղադրում ենք ուրիշներին, որ նրանք չեն համապատասխանում մեր սպասումներին: Բայց երբ սիրում ես, ոչինչ չես սպասում. մենք սիրում ենք, որովհետեւ դա ենք ցանկանում, եւ եթե ուրիշ մարդիկ էլ ինչ-որ բան են անում կամ չեն անում, ապա դարձյալ միայն այն պատճառով, որ ուզում են կամ չեն ուզում՝ դրա մեջ ոչ մի անձնական բան չկա: Եթե դու որեւէ բանի հետ հույսեր չես կապում, եւ դա տեղի չի ունենում, ապա ի՞նչ խնդիր կա: Մենք չունենք որեւէ տհաճ զգացմունք՝ ինչ էլ լինի՝ լավ է: Ահա թե ինչու, սիրահարներին գրեթե ոչինչ չի հուզում, նրանք իրարից ոչինչ չեն պահանջում, չեն կապում իրար պարտականություններով:

Սերը հիմնված է հարգանքի վրա: Վախը ոչ մեկին չի հարգում, այդ թվում՝ նաեւ վախին: Եթե ինչ-որ մեկին խղճում ես, ուրեմն նրան չես հարգում: Նա որոշումներ չի՞ կայացնում: Բայց եթե ստիպված ես ուրիշի փոխարեն որոշումներ ընդունել, ուրեմն նրան անհարգալից ես վերաբերվում: Իսկ եթե ինչ-որ մեկին չես հարգում, ապա փորձում ես նրան կառավարել:

ԻՄԱՆԱԼԸ ՉԻ ԽԱՆԳԱՐԻ

ՁԵՌՔԻ ՕՃԱՌԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ձեռքերի մաշկն ամենից շատ է հակված չորանալու, քանի որ անդադար շփման մեջ է տարբեր գրգռիչների հետ: Այդ պատճառով ձեռքերի համար նախատեսված միջոցների ճիշտ ընտրությունը շատ կարեւոր է: Պետք է հիշել, որ օճառն ինքնին հիմնային բաղադրություն ունի: Միջոցն ընտրելիս՝ անպայման ուշադրություն դարձրեք դրա կազմին:

Բաղադրության մեջ հնարավորին չափ պետք է քիչ լինեն սինթետիկ նյութերը, մասնավորապես, նատրիումի լաուրետսուլֆատը եւ դրա ածանցյալները: Լավ է, երբ այդ բաղադրիչները պիտակում թվարկված ցանկի վերջում են նշված լինում: Դա նշանակում է, որ դրանց պարունակությունն ամենաքիչն է:

Որակյալ օճառի մեջ փրփուր առաջացնող նյութերը բնական են, օրինակ, կոկոսի յուղը: Ձեռքերը լվանալուց հետո, ցանկալի է քսուք օգտագործել, որպեսզի չեզոքացնի օճառի հիմնային ազդեցությունը, եւ վերականգնվի մաշկի խոնավությունը:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Գեղանկարչությունը չպետք է դառնա լուսանկարչություն: Շատ լուսանկարիչներ են դառնում իսկական նկարիչներ, իսկ որոշ նկարիչներ՝ ցավոք, լուսանկարիչներ:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ
(1880-1972)
Հայ մեծ նկարիչ

Վատն է այն աշակերտը, որը ուսուցչին չի գերազանցել:

ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ
(1452-1519)
Իտալացի գեղանկարիչ

Մարդկության մեծ մասը ողջերը չեն, այլ մեռածները:

ԿԱՆՏ
(1724-1804)
Գերմանացի փիլիսոփա

Երբեք մի կռվիր նրա հետ, ով ոչինչ չունի կորցնելու, դա անհավասար մենամարտ է:

ԳՐԱՍԻԱՆ
(1601-1658)
Իսպանացի փիլիսոփա

Ով չի կարողանում խնայել քիչը, նա չի կարող պահել նաեւ շատը:

ՊՈՒԲԼԻԼԻՈՍ ՍԻՐՈՍ
(մ.թ.ա. 1-ին դարասկիզբ-մ.թ.ա. 1-ին դարավերջ)
Հին հունացի բանաստեղծ

Մարդը միայն իր պատկերացումների մեջ է ամենադժբախտն ու ամենաբախտավորը:

ԼԱՌՈՇՖՈՒԿՈ
(1613-1680)
Ֆրանսիացի քաղաքական գործիչ

Ինչքան ավելի բարակ է սառույցը, այնքան ավելի շատ են բոլորն ուզում համոզվել, թե արդյոք այն կդիմանա՞:

ՀԵՆՐԻ ՇՈՈՒ
(1800-1889)
Ամերիկացի բուսաբան

Մարդկանց հետ ապրի'ր այնպես, որ ընկերներդ չդառնան թշնամիներ, այլ թշնամիներդ դառնան ընկերներ:

Ա.ՂԱՋԱՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸à¶Ü°ð

** Նորածեւության սրահի աշխատակիցները խիստ ոգեւորված համոզում են այցելու կնոջը.*

- Մադմուազե'լ, խորհուրդ կտանք անպատճառ գնել այս զգեստը, այն նորածեւության վերջին ճիչն է:

- Որ լավն է, խոսք չունեմ ասելու, բայց գնելու դեպքում, այն կարող է դառնալ նաեւ ամուսնուս վերջին ճիչը...

** Երկու բժիշկ զրուցում են.*

-10 տարի առաջ ես մի հիվանդ ունեի, որն անպայման պետք է մահանար: Բայց նա ապրեց, ասեմ ավելին, նա ապրում է մինչեւ այսօր:

- Տեսնո՞ւմ ես, կոլեգա, եթե մարդու մոտ ապրելու ցանկություն կա, նա կապրի:

** - Հենց նոր ոսկե ժամացույցս հանեցին,- բողոքում է չուկչան ընկերոջը:*

- Իսկ ինչո՞ւ օգնության չէիր կանչում:

- Վախենում էի բերանս բացել: Ատամներս էլ են ոսկուց...

** Մի Եհովայի վկա կին նստում է տաքսի: Քանի որ նա բավականին գրավիչ ու գեղեցիկ էր, վարորդը չի դիմանում եւ ճանապարհի կեսին ձեռքը դնում է նրա ծնկին:*

- Սաղմոս համար 319,- ասում է կինը:

Վարորդը չհասկանալով, թե կինն ինչ է ասում, ձեռքը ետ է քաշում:

** Ամուսինը՝ կնոջը.*

- Սիրելի'ս, ուզո՞ւմ ես մումիաներին նայել:

- Էդ չլինի՞ որոշել ես ինձ Եգիպտոս տանել:

- Չէ', պարզապես հետուստացույցով նորածեւության ցուցադրություն է:

** - Ինչո՞ւ եք հենակներս վերցնում:*

- Բժիշկն ասել է վերցնեմ, որ ոչ մեկի չվնասեք:

- Իսկ ինքն ո՞ւր է...

- Հիմա կգա բուժման ծախսերը ներկայացնելու...

** - Միլիոնավոր տղամարդիկ ամբողջ աշխարհում ինչո՞ւ են այդքան սիրում Մոնա Լիզային:*

- Որովհետեւ նա միշտ ժպտում է եւ լռում:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ Է ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՋԱՆՔԵՐԻ ՀԱՄԱՏԵՂՈՒՄԸ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ «ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Նոյեմբերի 30-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Փարիզում մասնակցեց Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի կողմ պետությունների 21-րդ համաժողովին, որին մասնակցեցին 150 պետությունների եւ կառավարությունների ղեկավարներ, հազարավոր պատվիրակներ:

Հայաստանի նախագահը, համաժողովում ունեցած իր ելույթում կլիմայի փոփոխությունը գլոբալ մարտահրավեր համարելով, ընդգծեց, որ այն հավասարապես սպառնում է բոլոր պետություններին՝ անկախ նրանց չափից եւ զարգացման աստիճանից: Չնայած Հայաստանի մասնաբաժինը համամոլորակային արտանետումներում մեծ չէ եւ չի գերազանցում երկու հարյուրերորդական տոկոսային միավորը, այդուհանդերձ, ըստ Սերժ Սարգսյանի, Հայաստանը կարեւորում է այս հարցում բոլոր երկրների ջանքերը համատեղելու անհրաժեշտությունը եւ, որպես զարգացող երկիր, հանձնառություն է ստանձնել իր ներդրումն ունենալ համամոլորակային ջանքերում:

Մասնավորապես, Հայաստանը պատրաստ է ստանձնել ջերմոցային գազերի արտանետումների աճի սահմանափակման քանակական հանձնառություն:

Հայաստանի նախագահի համոզմամբ, այսօրվա փոխկապակցված եւ գլոբալացված աշխարհում մեկ երկրի առջեւ ծառացած մարտահրավերը հավաքական առումով բոլորի մարտահրավերն է: Հետեւաբար, լուծումները պետք է լինեն համապարփակ, համաձայնեցված եւ համադրված:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով, սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն կանցկացվի դեկտեմբերի 6-ին:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 7-ին Ազգային ժողովը հավանության էր արժանացրել սահմանադրության նախագծի վերջնական տարբերակը, որը ենթադրում է անցում ներկայիս կիսանախագահական համակարգից խորհրդարանական կառավարման մոդելի:

Նշենք, որ խորհրդարանական վեց ուժերից ՀԱԿ-ը, «Ժառանգությունը» եւ «Օրինաց երկիր»-ը հայտարարել են «ոչ»-ի քարոզարշավ անցկացնելու մասին, սահմանադրական փոփոխություններին կողմ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն ու Դաշնակցությունը՝ «այո»-ի:

Նշենք, որ դեկտեմբերի 2-ից Երեւանում սահմանադրական բարեփոխումների հարցով հանրաքվեի դեմ հանդես եկող ընդդիմադիր ուժերը սկսել են շուրջօրյա բողոքի ցույցներ: Ցույցերն անցկացվում են մայրաքաղաքի Ազատության հրապարակում, թեպետ Երեւանի քաղաքապետարանը արգելել է այնտեղ վրանների տեղադրումը:

Բողոքի ցույցերը կազմակերպել է «Նոր Հայաստան» շարժումը, որի կազմում միավորվել են մի շարք ընդդիմադիր կուսակցություններ:

Ինչպես նշվեց, նրանք պահանջում են սահմանադրական փոփոխությունների հարցով հանրաքվեի վերացում եւ երկրի գործող ղեկավարների պաշտոնաթողություն:

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի պաշտպանության նախարարության եւ Հունաստանի ազգային պաշտպանության նախարարության միջեւ ռազմական համագործակցության շրջանակներում, նոյեմբերի 30-ին Հունաստան է այցելել ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչության պետ Լեւոն Այվազյանի գլխավորած պատվիրակությունը:

Այցի ընթացքում, Լեւոն Այվազյանը հանդիպումներ է ունեցել Հունաստանի ազգային պաշտպանության գլխավոր շտաբի ռազմավարության եւ քաղաքականության դիրեկտորատի տնօրեն, դեր-ծովակալ Իոաննիս Պավլոպուլոսի եւ միջազգային համագործակցության վարչության պետ, բրիգադի գեներալ Միլտիադիս Գրիլակիսի հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ Հունաստանի միջեւ ռազմական համագործակցության զարգացմանն ու խորացմանը, տարածաշրջանում տիրող իրավիճակին վերաբերող եւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Այցի արդյունքում, ստորագրվել է Հայաստանի պաշտպանության նախարարության եւ Հունաստանի ազգային պաշտպանության նախարարության միջեւ ռազմական համագործակցության 2016 թվականի ծրագիրը:

ԿԻՐԱԿԱՆԱՑՎԵՆ 35,880 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայաստանի՝ ՄԱԿ-ի Զարգացման աջակցության 2016-2020 թթ. ծրագրի շրջանակում, Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան թիմը մինչեւ 2020թ. Հայաստանում արդարացի, կայուն տնտեսական զարգացման եւ աղքատության կրճատման նպատակով, նախատեսում է իրականացնել շուրջ 35 միլիոն 880 հազար ԱՄՆ դոլարի արժողությամբ աշխատանք:

Արդարացի, կայուն տնտեսական զարգացում եւ աղքատության կրճատումն ապահովելու համար, Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակը ՀՀ կառավարության հետ համագործակցության արդյունքում, մինչեւ 2020 թվականը նպատակադրված է ապահովել որակյալ եւ լավ վարձատրվող աշխատատեղերի ստեղծում, օգնել կառավարությանը մինչեւ 2021թ. ապահովելու զբաղվածության ընդլայնում շուրջ 135 հազար աշխատատեղով:

2014 թվականին 144 երկրների շարքում Հայաստանը համաշխարհային մրցունակությամբ զբաղեցրել է 85-րդ հորիզոնականը: Առաջիկա հինգ տարիների ընթացքում, նախագծերի բարեհաջող իրականացման արդյունքում, նախատեսվում է Հայաստանը տեսնել 80-րդ հորիզոնականում, աղքատության մակարդակը 32%-ից հասցնել 27%-ի, ընդ որում՝ տղամարդկանց շրջանում աղքատության 31,7%-ը կհանսի 27%-ի, կանանց շրջանում՝ 32,2%-ը՝ 27%-ի, երիտասարդների շրջանում (15-17տ.)՝ 35,4%-ից 30%-ի:

ՀԱՅԱՍՏԱՆԸ B ԵՎ C ՀԵՊԱՏԻՏԻ ՄԻՋԻՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

Հայաստանը հեպատիտ B-ի եւ C-ի առումով համարվում է միջին տարածվածության գոտի: Հայաստանի բնակչության 2-3 տոկոսն ունի խրոնիկ հեպատիտ B վիրուսակրություն եւ մոտ 4 տոկոսը՝ խրոնիկ հեպատիտ C վիրուսակրություն:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, ՄԻԱՎ-ի եւ հեպատիտների վերաբերյալ հետազոտման եվրոպական նախաձեռնության շրջանակներում, անցկացրել է «Հետազոտվիր, բուժվիր եւ կանխարգելիր» խորագրով ծրագիրը: Ծրագրի ղեկավարները նշում են, որ Եվրոպայում արդեն մի քանի տարի հայտարարվում է ՄԻԱՎ-ի հետազոտման շաբաթ: Այս տարի եվրոպական նախաձեռնությունն իր տեղեկատվական արշավում ավելացրել է նաեւ հեպատիտները, քանի որ վարակված լինելու, սակայն այդ մասին չիմանալու վտանգ կա նաեւ հեպատիտների, հատկապես՝ C-ի եւ B-ի դեպքում, որոնք, եթե վաղ հայտնաբերվեն, կարող են բուժվել: Հեպատիտ C-ն այսօր արդեն 90 տոկոս եւ ավելի դեպքերում հնարավոր է լիարժեքորեն բուժել, իսկ հեպատիտ B-ն, եթե խրոնիկ ձեւ ունի, չի բուժվում վերջնականորեն, սակայն համապատասխան բուժման միջոցով երկարացվում է կյանքը, եւ մարդը կարող է տասնյակ տարիներ ապրել՝ ավելի փոքր դարձնելով լյարդի ցիրոզի եւ քաղցկեղի առաջացման ռիսկը:

Աշխարհում տարեկան 1,4 միլիոն մարդ մահանում է վիրուսային հեպատիտներից եւ դրա հետեւանքով առաջացած լյարդի ցիրոզից ու քաղցկեղից: Ըստ առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների, շուրջ 240 միլիոն մարդ խրոնիկ վարակված է հեպատիտ B վիրուսով, 130-150 միլիոնը՝ հեպատիտ C-ով: Տարեկան հայտնաբերվում է վարակի 3-4 միլիոն նոր դեպք:

Ինչ վերաբերում է ՄԻԱՎ-ին, ապա 2013-ին աշխարհում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց թիվը կազմել է մոտ 35 միլիոն, մահացել է մոտ 1,5 միլիոն ՁԻԱՀ-ով հիվանդ:

Հայաստանում իրավիճակը, 1988թ. ի վեր, երբ հայտնաբերվել է ՄԻԱՎ-ի առաջին դեպքը, մինչեւ 2015թ. հոկտեմբերի 31-ը 2194 ՄԻԱՎ դեպք է հայտնաբերվել, որից 334-ը՝ 2015-ին: 1988թ. առ այսօր 493 մահվան դեպք է ՀՀ-ում արձանագրվել, որոնց մեջ կան կանայք եւ երեխաներ:

ՁՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԸ՝ 80 ՏԱՐԵԿԱՆ

Դեկտեմբերի 3-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հյուրընկալեց գրող, հրապարակախոս, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ Ձորի Բալայանին եւ անվանի մտավորականի ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան ժամանած ռուս մտավորականների ներկայացուցչական պատվիրակությանը:

Սերժ Սարգսյանը շնորհավորեց Ձորի Բալայանին ծննդյան հոբելյանի, ինչպես նաեւ նրա ստեղծագործությունների ժողովածուի հրատարակման կապակցությամբ, մաղթեց առողջություն, անսպառ եռանդ եւ ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Նշենք, որ Մոսկվայի հայտնի «Խուդոժեստվենայա լիտերատուրա» հրատարակչությունը լույս է ընծայել Ձորի Բալայանի ստեղծագործությունների ութ հատորյակը:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎ՝ ԷԴՈՒԱՐԴ ՇԱՐՄԱԶԱՆՈՎԻՆ

Հայաստանի Աժ փոխնախագահ, Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Միջխորհրդարանական վեհաժողովում (ԱՊՀ ՄԽՎ) ՀՀ Աժ պատվիրակության անդամ Էդուարդ Շարմազանովը Սանկտ Պետերբուրգում նոյեմբերի 27-ին մասնակցել է ԱՊՀ ՄԽՎ 43-րդ լիագումար նիստի աշխատանքներին: Աժ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը ՌԴ ԴԺ Դաշնության խորհրդի նախագահ, ԱՊՀ ՄԽՎ խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի կողմից պարգեւատրվել է ԱՊՀ ՄԽՎ բարյդրագույն պարգեւով՝ ԱՊՀ ՄԽՎ շքանշանով:

25 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՎԱՐԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամը Հայաստանին 25 միլիոն ԱՄՆ դոլարի փոխառություն կտրամադրի գյուղական տարածքների ջրային ենթակառուցվածքների զարգացման համար: Ազգային ժողովը քվեարկությամբ հաստատեց «Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջեւ «Ենթակառուցվածքների եւ գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիր» վարկային համաձայնագիրը: Նշվեց, որ վարկը Հայաստանին տրամադրվում է 20 տարի մարման եւ 5 տարի արտոնյալ ժամկետով: Տարեկան սպասարկման վճարը կկազմի մեկ տոկոս, իսկ տոկոսադրույքը՝ 2,5 տոկոս:

ԸՆԴԳՐԿՎԵՑԻՆ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՕՐԱՑՈՒՅՑՈՒՄ

Ոսկան Երեւանցու տպագրությամբ հայերեն առաջին Աստվածաշնչի (1666թ.) 350-ամյակը եւ Հովհաննես Այվազովսկու (1817-1900թթ.) ծննդյան 200-ամյակն ընդգրկվել են Հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2016-2017 թթ. օրացույցի մեջ: Որոշումը կայացվել է Փարիզում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում, նոյեմբերի 4-18-ը տեղի ունեցած Գլխավոր կոնֆերանսի 38-րդ նստաշրջանի ընթացքում: Այսպիսով, 1998 թվականից առ այսօր Հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի օրացույցում ներառվել է Հայաստանի կողմից ներկայացված 21 հոբելյանական տարեթիվ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

05.12.2015. Սուրբ Գրիգոր եւ Նիկողայոս Սքանչելագործ Հայրապետների եւ Մյուռոն եպիսկոպոսի հիշատակության օր

06.12.2015. Բարեկենդան Սուրբ Հակոբի պահքի

08.12.2015. Սուրբ Կոռնելիոս հարյուրապետի եւ Շմավոնի՝ Քրիստոսի ազգականի, որ խաչվեց Երուսաղեմում եւ Զմյուռնիայի Պողիկարպոս Հայրապետի եւ Արեւելքի սուրբ վկաների

09.12.2015. Հղություն Սուրբ Աստվածածնի

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԱԽԱԼՔԱԼԱՔՅԻ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿ ԳԱԳԻԿ ՊՈՂՈՅԱՆԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Լեհական Կոլոբժեգ քաղաքից, որտեղ անցկացվեց բռնցքամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունը, որին մասնակցում էին 40 երկրների ներկայացուցիչներ, Գագիկ Պողոյանը իր հարազատ Կարտիկամ գյուղ վերադարձավ մայրցամաքի առաջնությանը (56 կգ քաշային կարգ) նվաճած բրոնզե մեդալով: Նա Վրաստանի հավաքականի կազմում եւս վեց մարզիկների հետ պաշտպանում էր մեր երկրի պատիվը:

Մրցաշարում, մինչեւ կիսաեզրափակիչ հասնելը, Գագիկը առավելության հասավ Հայաստանի, Հունգարիայի ներկայացուցիչների նկատմամբ, իսկ կիսաեզրափակիչ փուլում զիջեց ֆին մարզիկին եւ արժանացավ բրոնզե մեդալի:

Վրաստանցի եւս երկու բռնցքամարտիկներ՝ թբիլիսցի Նիկոլոզ Բեգաձեն (91 կգ քաշային կարգ) նվաճեց ոսկե եւ գորեցի էսկերխան Մադիեւը (64 կգ քաշայի կարգ՝ բրոնզե մեդալ:

Շնորհավորում ենք մեր մեդալակիրներին, հատկապես Գագիկին, նրա մարզիչ, Ախալքալաքիի մարզահամալիրի տնօրեն Ատոմ Էլիզբարյանին մարզական մեծ հաղթանակների առթիվ:

Նշենք նաեւ, որ այս տարի Ատոմ Էլիզբարյանի եւս երկու սաները՝ Օթար Երանոսյանը, Բուլղարիայի Սամակով քաղաքում փետրվարին անցկացված Եվրոպայի պատանեկան առաջնությունում (60 կգ) արժանացավ արծաթե մեդալի, իսկ Ուկրաինայի Լվով քաղաքում մայիսին անցկացված մինչեւ 16 տարեկանների Եվրոպայի առաջնությունում Արտեմ Յորդանյանը (80 կգ) նվաճեց բրոնզե մեդալ:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՍՈՆԱ ՎԱՆԸ՝ ՆՈՐԻՑ ԻՐ ՍԻՐՎԱԾ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

2015-ի դեկտեմբերի 2-ին ամերիկահայ հայտնի բանաստեղծուհի Սոնա Վանը «Հայարտուն» մշակութային կենտրոնում մասնակցեց Հայոց ցեղասպանությանը նվիրված իր «Լիբրետո՝ անապատի համար» եւ «Չընդհատված Շահերազադե» գրքերի շնորհանդեսին:

Սոնա Վանը (Սոնա Տեր-Հովհաննիսյան) ծնվել է Երեւանում, 1978թ.-ից ապրում է Կալիֆոռնիայում: Ավարտել է Երեւանի բժշկական ինստիտուտը: Հեղինակ է «Փշրանքներ», «Ես անուն չունեմ», «Ես ձայն եմ լսում», «Չառա անունով թռչունը», «Լիբրետո՝ անապատի համար», «Չընդհատված Շահերազադե»... բանաստեղծական ժողովածուների: Թարգմանվել է վրացերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, պարսկերեն, այլ լեզուներով: Սա Սոնա Վանի երրորդ այցն է Թբիլիսի:

Տեղին է նշելը, որ գտնվել էր «Լիբրետոյի...» մատուցման բավականին գեղեցիկ ձեւաչափ. ստեղծագործությունը լսվեց եւ միաժամանակ դիտվեց՝ անձամբ հեղինակի ընթերցանության ու թեմային համապատասխան կինոժապավենի ցուցադրման միջոցով, որից հետո ներկաները լսեցին վիրահայ ճանաչված բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանի ճշմարիտ, հիմնավորումներով հագեցված՝ Սոնա Վանի կյանքին եւ ստեղծագործական ճանապարհին նվիրված ուրվագիծը: Նա խոսքն ավարտեց Սոնա Վանին ձոնված իր բանաստեղծության ընթերցումով:

Աշխարհահռչակ կինոռեժիսոր-դոկումենտալիստ, ՀՀ ժողովրդական արտիստ, միջազգային մրցույթների դափնեկիր, «Ոսկե ծիրան» կինոփառատոնի հիմնադիր-տնօրեն Հարություն Խաչատրյանը, գրքի մի շարք արժեքների հետ, նշեց նաեւ նրա պատկերավոր ոճը, որի շնորհիվ, ինչպես ասաց Խաչատրյանը, «Աչքի առաջ մոնտաժվում են պատկերները...»: Վիրահայոց թեմի Քվեմո Քարթլիի տարածաշրջանի հոգեւոր հովիվ-տեսուչ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանը բանաստեղծուհուն հաղորդեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ողջույնը եւ իր գնահատանքում, մասնավորապես, նշեց հետեւյալը. «Բանաստեղծուհու ողջ ստեղծագործության մեջ կարմիր թելի պես անցնում են Աստվածաստեղծ մարդու բարձրագույն արժեք լինելու գաղափարը, չարի դեմ ընդվզումը, մարդուն իր մարդկային ակունքներին վերադարձնելու միտումը...»:

Երեկոն ուղեկցվեց ՀՀ վաստակավոր արտիստուհի, երեւանցի, ասմունքի հանրաճանաչ վարպետ Սիլվա Յուզբաշյանի՝ Սոնա Վանի ստեղծագործությունների նմուշների բարձրարվեստ ընթերցումով:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՅՈՒՅՑԱՀԱՆԴԵՍ

ՄԱՐԻՆԱ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԱՅԻ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մոսկվայի Հայ Առաքելական եկեղեցու նորակառույց տաճարային համալիրի թանգարանում բացվեց «Յոթ դպրոցների խաչմերուկ» ցուցահանդեսը:

Ցուցահանդեսին վիրահայ նկարիչներին ներկայացնում էր ճանաչված թբիլիսցի նկարիչ Մարինա Խաչատուրովան, որի աշխատանքները արվեստի յոթ տարբեր դպրոց ներկայացնող ժամանակակից հայ հանրահայտ գեղանկարիչներ Նիկոլայ Նիկողոսյանի (Մոսկվա), Սամվել Պետրոսյանի (Մոսկվա), Սամվել Մադոյանի (Սանկտ Պետերբուրգ), Խաչիկ Աղամալյանի (Մոսկվա), Գագիկ Բաղալյանի (Մոսկվա) եւ Ազատ Պետրոսյանի (Երեւան) գործերի հետ միասին կազմեցին ցուցանմուշների կորիզը:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը, ազգային բարերար Լեւոն Հայրապետյանը, քանդակագործ, լենինյան մրցանակի դափնեկիր Ֆրիդրիխ Սողոյանը, քաղաքի հայկական համայնքի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ ժողովրդական նկարիչ եւ ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, Ռուսաստանի արվեստի ակադեմիայի ակադեմիկոս Նիկոլայ Նիկողոսյանը, որին եւ նվիրված էր ցուցահանդեսը:

Ռուսաստանի արվեստի ակադեմիայի նախագահ Զուրաբ Ծերեթելու անունից ելույթ ունեցավ ակադեմիայի փոխնախագահ, պրոֆեսոր Անդրեյ Զոլոտովը:

Ցուցահանդեսը կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 30-ը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.13-րդ դարի հայ մանրանկարիչ ... Ռոսլին: 5.Անգլիացի հայտնի գրող Սամորսեթ ...: 8.«Ինչու է ժպտում անցորդը» գրքի հեղինակ ... Խեչումյան: 9.Ջրով ողողված տարածք: 12.Ճաբուա Ամիրեջիբի «... Թուքաշխիա»: 14.Հսկիչ, պահակ, որեւէ օբյեկտի պաշտպան: 17.Մարգի կողքի հողի կույտը: 18.... դուրս գալ: 20.Վիկտոր Հյուգոյի հերոս: 22.Երկրորդ տասնյակը: 26.Լրիվությամբ, ամբողջությամբ: 28.Բույսի մաս: 32.Պատի գաջապատ հատվածը: 34.... Քոչարյան: 35.Կածան, շավիղ: 36.«...ը շուռ տուր, խոփիդ ղուրբան» («Գութանի երգը»): 37.Հրաբխի ժայթքածը: 38.Դրա մեջ կարող է արտացոլվել քո պատկերը: 40.«Գովեք դուք ձեր բարակ ..., բայց նկատեք գետն ուրիշի» (Վ.Խերանյան): 42.6-րդ նոտան: 44.Գիքորի մայրը: 45.Երգչուհի ... Արշակյան: 47.«... կուգաս, ղարիբ բլբուլ» (Սայաթ-Նովա): 48.Կծծի, ագահ: 50.Վիրահայոց թեմի առաջնորդ ... Վազգեն եպիսկոպոս Միրզախանյան: 50.Ազոտ, թթվածին: 55.Մսամթերք: 57.Ե'վ երաժշտական տերմին, ե'ւ մազի ներկ: 59.Գրքի, թերթի, ամսագրի արտադրամաս: 60.... Մարգար: 61.... տալ, կլանել: 63.Շառլ Ազնավուրի մեծ բարեկամը՝ ... Նինելի: 64.Դետեկտիվ գրող ... Քրիստի:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Ոխերիմ թշնամի: 3.... Ցիգանովա: 4.Քնար համաստեղության ամենապայծառ աստղը: 6.... Կուլպա «Իմ մեղքը»: 7.Արցախի հերոսամարտի հերոս ... Մելքոնյան: 10.Հայաստանի խորհրդարանը: 11.Փշատերեւ անտառների գոտի: 13.Նորաբաց ստեղծարար կենտրոն Գյումրիում: 15.Երգող, ..., արտասանող: 16.Թագավոր, միապետ: 19.Վրաստանի արդարադատության նախարար ... Ծուլուկիանի: 21.Պ.Սեւակին նվիրված երգ «..., գնացի» (Գուսան Շահեն): 23.Գործն ... պես: 24.Հույս, սատար, մեջք: 25.Ռուս մեծ պոետ: 26.Շատ հայտնի քաղաք Նիդերլանդներում: 27.Հյութերի արտադրամաս Հայաստանում: 29.Սգալ, կսկծալի լաց լինել, մղկտալ: 30.Մրգի, բանջարեղենի տեսակ: 31.Հայտնի հեռուստահաղորդավարուհի ... Շլեպչյան: 33.«Տես ... կա քո գլխին» (մանկական երգ): 39.... Վեգաս: 41.Հերոսուհի «Պարոն 420» ֆիլմում: 43.Փառատոների քաղաք: 46.Արեւմտահայ գրող Սիամանթոյի իսկական անունը: 48.... եւ ծիծաղ: 49.Թբիլիսյան թռչուն: 51.Վրացական ուտեստ (համեմունք): 52.Լա ... օպերան Իտալիայում: 54.Ցավ ...: 56.Աբրահամի կինը: 58.Մայրը օտարահունչ: 62.Միանիշ զույգ թիվ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Անլեգալ: 9.Ժյուրի: 10.Վաչե: 11.Լիբերեց: 13.Դալիմ: 16.Թուզ: 17.Տող: 19.Լուսան: 22.Սեդան: 24.Բիրեմա: 25.Շելֆ: 27.Անտոմս: 29.Լուսակա: 32.Եռամարտ: 33.Դանիել: 35.Սարք: 37.Ղեկ: 39.Ստնտու: 40.Աքոս: 43.Գեն: 44.Ռիսկ: 47.Ավե: 49.Մոթել: 50.Տեղը: 53.Սինի: 54.Իպր: 55.Իսլի: 57.Չեշ: 58.Ագատիչ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Կնճիթ: 2.Թերեզ: 3.Հավետ: 4.Ուժեղ: 5.Ռուալ: 6.Ֆիլմ: 8.Լացող: 12.Բուրդ: 14.Ամուր: 15.Իմամ: 18.Անեմ: 19.Լիբում: 20.Սեմարանգ: 21.Նանա: 23.Աշոտիկ: 26.Լսել: 28.Նվաղ: 29.Լառ: 30.Սաստ: 31.Կտրտել: 34.Նելսոն: 36.Քուն: 38.Կով: 41.Թալիշ: 42.Սետրա: 45.Իմիջ: 46.Կթիչ: 48.Եղիա: 51.Ըստ: 52.Ճիչ: 56.Կի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445